ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

23 դեկտեմբերի 2015թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ
ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ
ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N1293-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով և 3-րդ կետով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N93-Ն որոշմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 2015 թվականի դեկտեմբերի 1-ի հ.17-3-24357 և 2015 թվականի դեկտեմբերի 2-ի հ.17-3-24399 գրություններով տրված համաձայնությունները՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել սույն որոշման N 1 հավելվածում նշված իրավաբանական անձանց՝ 2016 թվականի ընթացքում շարունակելու N 1 հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը։

2. Թույլատրել սույն որոշման N 2 հավելվածում նշված անձանց՝ N 2 հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղեր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են դիմել համայնքի ղեկավարին՝ ավագանու որոշմամբ իրենց կողմից նշված տարածքում ավտոկայանատեղ նախատեսելու համար և վճարել ամսական կամ տարեկան տուրք ամբողջ ավտոկայանատեղի տարածքի համար: Տուրքի չափը հաշվարկվում է ըստ տվյալ ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցների կայանման տեղերի թվի և ավագանու կողմից սահմանված մեկ ավտոտրանսպորտային միջոցի դրույքաչափի:

2. Ավտոկայանատեղի ամբողջ տարածքի համար տուրք վճարած ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են սահմանափակել կամ չսահմանափակել տվյալ ավտոկայանատեղում այլ անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների կայանման իրավունքը, սակայն իրավունք չունեն ավտոկայանատեղից օգտվողից գանձելու վճար:

ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝

ծառայողական ավտոկայանատեղ՝ ավտոկայանատեղ, որի կազմակերպման իրավունքը վճարված տուրքի դիմաց հանձնված է որևէ իրավաբանական կամ ֆիզիկական անձի, որը կարող է սահմանափակել կամ չսահմանափակել տվյալ ավտոկայանատեղում այլ անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների կայանման իրավունքը, սակայն իրավունք չունի ավտոկայանատեղից օգտվողից գանձելու վճար:

Նույն որոշման հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ ավտոկայանատեղերի կազմակերպումն իրականացվում է համայնքի ավագանու որոշման հիման վրա: Ավտոկայանատեղերի տեղաբաշխումը համաձայնեցվում է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության հետ:

Երևան քաղաքի ավագանու 2013, 2014 և 2015թթ. համապատասխան որոշումների հիման վրա ծառայողական ավտոկայանատեղեր կազմակերպելու իրավունք ստացած իրավաբանական և ֆիզիկական անձինք դիմել են կազմակերպված և գործող ավտոկայանատեղերը 2016թ.-ի ընթացքում շահագործելու շարունակման իրավունք ստանալու խնդրանքով:

Նոր ծառայողական ավտոկայանատեղեր կազմակերպելու թույլատրման խնդրանքով են դիմել նաև՝ «Բելլեզզա» ՍՊԸ-ն և քաղաքացի Ռոբերտ Եղիազարյանը:

Երևան քաղաքի ավագանու 30.05.2014թ. հ.179-Ա որոշմամբ՝ Տերյան փող. հ.91/1 հասցեին հարակից ճանապարհահատվածում «Դերմիգ» ՍՊԸ–ի կողմից կազմակերպված ավտոկայանատեղի հետագա շահագործման իրավունքը վերոհիշյալ հասցեում այդ ընկերության փոխարեն ներկայումս գործունեություն ծավալող՝ նույն սեփականատիրոջ կողմից հիմնադրված «Դեմգո» ՍՊԸ-ին փոխանցելու խնդրանքով է դիմել նշված ընկերությունների հիմնադիրը:

Այդպիսի համատեղ խնդրանքով են դիմել նաև Երևան քաղաքի ավագանու 28.10.2015թ. հ. 411-Ա որոշմամբ՝ Մ.Մաշտոցի պող. հ.43 շենքի հ.հ.34 և 36 տարածքներին հարակից ճանապարհահատվածի ծառայողական ավտոկայանատեղի կազմակերպիչ՝ քաղաքացի Անահիտ Խաչատրյանը և նշված տարածքում նրա փոխարեն ներկայումս գործունեություն ծավալող՝ «Գլոբբինգ» ՍՊԸ-ն:

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ համաձայնեցվել է նոր ծառայողական ավտոկայանատեղերի տեղաբաշխումը, որի վերաբերյալ առկա են նշված կառույցի 2015 թվականի դեկտեմբերի 1-ի հ.17-3-24357 և 2015 թվականի դեկտեմբերի 2-ի հ.հ.17-3-24399 գրությունները:

Ծառայողական ավտոկայանատեղերը չեն կազմակերպվում զորամասերի, ռազմական կամ ազգային անվտանգության համակարգերի շենքերին կամ շինություններին հարակից տարածքներում:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ. 93-Ն որոշմամբ սահմանվել է Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում ծառայողական ավտոկայանատեղերի կազմակերպման կարգը:

Ելնելով վերոգրյալ իրավական ակտերի պահանջներից և սահմանված դրույթներից՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու և ծառայողական ավտոկայանատեղեր կազմակերպելու իրավունք տալու մասին» որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու և ծառայողական ավտոկայանատեղեր կազմակերպելու իրավունք տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու և ծառայողական ավտոկայանատեղեր կազմակերպելու իրավունք տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2016 թվականի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխությունների անհրաժեշտությունը բացակայում է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված N 1
Երևան քաղաքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի ----ի
N ___-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ

Հ/Հ	Դիմող	Ծառայողական ավտոկա-յանատեղի տարածքի հասցե	Կայանատեղում «ավտոտեղ»-երի քանակ (տարածքի չափեր) և կայանման ձև	Կազմակերպչի կողմից վճարված տուրք	Այլ տրանսպորտային միջոցների կայանման սահմանափակում, աշխատանքային ռեժիմ
1	2	3	4	5	6
1	«Անի Պլազա Հոթել» ՓԲԸ	Սայաթ-Նովայի հ.19 հասցեին հարակից ճանապարհահատված	5 (37,5 զծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Սայաթ-Նովայի հ.19 շենքի օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
2	«Ամերիաբանկ» ՓԲԸ	Գր. Լուսավորչի հ.9 հասցեին հարակից ճանապարհահատված	4 (30,0 զծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Գր. Լուսավորչի հ.9 հասցեի շենքի այլ սեփականատերերի և օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ բանկի աշխատանքային ռեժիմին՝ օրերին և ժամերին համապատասխան,
3	«Գրիտտի» ՍՊԸ	Թումանյան փողոցի՝ Հյուսիսային պողոտա հ.3 հասցեին հարակից ճանապարհահատված	4 (30,0 զծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Թումանյան փողոցի՝ Հյուսիսային պողոտա հ.3 հասցեի շենքի այլ սեփականատերերի և օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ ընկերության աշխատանքային ռեժիմին՝ օրերին և ժամերին համապատասխան

1	2	3	4	5	6
4	«Ալ Պառկո Հյուրանոց» ՍՊԸ	Իտալիայի հ.1 հասցեին հարակից ճանապարհահատված	16 (41,2 մ x 5,1 մ), միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
5	«Երևան հյուրանոց» ԲԲԸ	Աբովյան հ.14 հասցեին հարակից ճանապարհահատված	5 (37,5 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Աբովյան հ.14 հասցեի շենքի սեփականատերերի և այլ օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
6	«Զիգզագ» ՍՊԸ	Չարենցի 24 հասցեին հարակից ճանապարհահատված	4 (30,0 գծմ.), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Չարենցի 24 հասցեի շենքի այլ սեփականատերերի և օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ ընկերության աշխատանքային ռեժիմին՝ օրերին և ժամերին համապատասխան
7	«Էլիտ Պլազա» ՓԲԸ	Խորենացու հ.15 հասցեին հարակից ճանապարհահատված	14 (35,0 մ x 5,0 մ), միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Խորենացու հ.15 հասցեի շենքի օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ ընկերության աշխատանքային ռեժիմին՝ օրերին և ժամերին համապատասխան
8	«Կոնվերս-Բանկ» ՓԲԸ	Վ.Սարգսյան 26/1 հասցեին հարակից ճանապարհահատված	4 (5,0 մ x 10,0 մ) միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ՝ երկու շարքով	տարեկան	սահմանափակմամբ, աշխատանքային ռեժիմը՝ բանկի աշխատանքային ռեժիմին՝ օրերին և ժամերին համապատասխան

1	2	3	4	5	6
9	«Ամերիա» ՓԲԸ	Վ. Սարգսյան հ. 2 և հ. 4 շենքերի դիմացի հատված՝ Շահումյան հրապարակի մի հատված՝ 608 քմ տարածք	30 (13,5 մ x 37,5մ) միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ երկու շարքով	տարեկան	սահմանափակմամբ, աշխատանքային ռեժիմը՝ բանկի աշխատանքային ռեժիմին՝ օրերին և ժամերին համապատասխան
10	«Արմենիա» Հյուրանոցային Համալիր ՓԲԸ	Ամիրյան հ.1 հասցեին հարակից ճանապարհահատված	32 (41,0 մ x 10,0 մ) միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ երկու շարքով	տարեկան	սահմանափակմամբ, աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
		Գր. Տեր-Գրիգորյան հ.4 հասցեին հարակից ճանապարհահատված	4 (30,0 գծմ) մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով		
11	«ՍԱՍ Գրուպ» ՍՊԸ	Թումանյան փող. հ.31 շենքի թիվ 74 տարածքին հարակից ճանապարհահատված	3 (22,5գծմ) մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Թումանյան փող. հ.31 հասցեի շենքի սեփականատերերի և օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
		Իսահակյան փող. հ.35 հասցեին հարակից ճանապարհահատված	3 (7,5 մ x 5,0 մ) միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ մեկ շարքով		սահմանափակմամբ, բացառությամբ շենքի սեփականատիրոջ, աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
		Աբովյան փող՝. Իսահակյան փող. հ.35 հասցեին հարակից ճանապարհահատված	8 (20,0 մ x 5,0 մ) միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ մեկ շարքով		սահմանափակմամբ, բացառությամբ շենքի սեփականատիրոջ աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
1	2	3	4	5	6
		Բաղրամյան պող. հ.85 հասցեին հարակից ճանապարհահատված	10 (25,0 մ x 5,0 մ), 2 (5,0 մ x 5,0 մ) միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ մեկ	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Բաղրամյան պող. հ.85 հասցեի շենքի սեփականատերերի և օրինական տիրապետողների

			շարքով		աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
		Կոմիտաս պող. հ.52 շենքի թիվ 72 տարածքին հարակից ճանապարհահատված	7 (17,5 մ x 5,0 մ) միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ մեկ շարքով		սահմանափակմամբ, բացառությամբ Կոմիտաս պող. հ.52 հասցեի շենքի սեփականատերերի և օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
		Կիևյան փող. հ.1ա հասցեի հ.1/4 տարածքին հարակից ճանապարհահատված	5 (12,5 մ x 5,0 մ) միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ մեկ շարքով		սահմանափակմամբ, բացառությամբ Կիևյան փող. հ.1ա հասցեի շենքի սեփականատերերի և օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
		Քաջազնունու փող.հ.20/1 թիվ 29 շինությանը հարակից ճանապարհահատված	7 (17,5 մ x 5,0 մ) միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ մեկ շարքով		սահմանափակմամբ, բացառությամբ Քաջազնունու հ.20/1 թիվ 29 շինության սեփականատերերի և օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
		Արշակունյաց պողոտայի՝ հ.11/1 շենքին հարակից ճանապարհահատվածի երթևեկելի մասի տեղային լայնացման հատված	4 (10,0 մ x 5,0 մ) 4 (10,0 մ x 5,0 մ), միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ մեկ շարքով	Տարեկան	սահմանափակմամբ, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին, շուրջօրյա

1	2	3	4	5	6
12	«Սուր Արթուր» ՍՊԸ	Վարդանանց փող. հ.73 հասցեին հարակից ճանապարհահատված	7 (17,5 մ x 5,0 մ) միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ մեկ շարքով	տարեկան	առանց սահմանափակման
13	«Գինեքար» ՍՊԸ	Վ. Սարգսյան փող. հ.26/1 հասցեի հանդիպակաց վայրում երթևեկելի մասի տեղային լայնացման հատված	9 (22,5մ x 5,0 մ) միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
		Հանրապետության հրապարակ՝ Վ.Սարգսյան փող. հ.26/1 շենքի հարակից երթևեկելի մասի տեղային լայնացման հատված	8 (10,0մ x 10,0մ) միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ երկու շարքով		
14	«Լյուքս-Անահիտ» ՍՊԸ	Մ. Խորենացու փողոցի հ.20 հասցեին հարակից ճանապարհահատված	3 (22,5 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Մ.Խորենացու փողոցի հ.20 հասցեի շենքի այլ սեփականատերերի և օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ ընկերության աշխատանքային ռեժիմին՝ օրերին և ժամերին համապատասխան
15	«Սվէն Գրուպ» ՓԲԸ	Մեսրոպ Մաշտոցի պողոտա՝ հ.42 շենքի թիվ 30 տարածքին հարակից ճանապարհահատված	4 (30,0 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Մեսրոպ Մաշտոցի պողոտա հ.42 շենքի այլ սեփակա-նատերերի և օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին ժ.09^{00}-00^{00}

1	2	3	4	5	6
16	«Սիմառ» ՍՊԸ	Փափազյան փողոց՝ հ.21 շենքի թիվ 92 տարածքին հարակից ճանապարհահատված	7 (52,5 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Փափազյան փողոց հ.21 հասցեի շենքի այլ սեփականատերերի և օրինական տիրապետողների,աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
17	«Վաղարշ և որդիներ Կոնցեռն» ՍՊԸ	Մ.Խորենացու փողոց՝ հ.24 հասցեի շենքին հարակից ճանապարհահատվածի երթևեկելի մասի տեղային լայնացման հատված	25 (62,5 մ x 5,0 մ) միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ մեկ շարքով	տարեկան	առանց սահմանափակման
18	«Մանկան» ՍՊԸ	Մոսկովյան փողոց՝ Աբովյան հ.36 հասցեի շենքին հարակից ճանապարհահատվածի երթևեկելի մասի տեղային լայնացման հատված	3 (22,5 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Աբովյան փող. հ.36 հասցեի շենքի այլ սեփականատերերի և օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին ժ.09^{00}-20^{00}
19	«Սիտադել» ՍՊԸ	Վաղարշյան փողոցի՝ հ.13/5 հասցեում գտնվող տաղավարին և հ.13/5 թիվ 8 շրջությանը հարակից ճանապարհահատվածներ	1 (7,5 գծմ), 2 (15,0 գծմ) մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Վաղարշյան փողոցի հ.13/5 հասցեի շենքի այլ սեփականատերերի և օրինական տիրապետողների , աշխատանքային ռեժիմը՝ ընկերության աշխատանքային ռեժիմին՝ օրերին և ժամերին համապատասխան
20	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	Նալբանդյան հ.46 հասցեին հարակից ճանապարհահատված	3 (22,5 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Նալբանդյան հ.46 շենքի օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին ժ.09^{00}-19^{00}

1	2	3	4	5	6
21	«Էքսիս Ռիթեյլ» ՍՊԸ	Հանրապետության հ.61 հասցեին հարակից ճանապարհահատված	3 (22,5 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Հանրապետության հ.61 շենքի օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին ժ.08^{00}-22^{00}
22	«Սինգելնիքս Լիմիթիդ» ՓԲԸ	Ամիրյան փող. հ.13/2 հասցեին հարակից ճանապարհահատված	3 (22,5 գծմ) մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Ամիրյան փող. հ.13/2 հասցեի շենքի սեփականատիրոջ, աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
23	«Արտէքսիմ» ՍՊԸ	Գր.Լուսավորչի փող. հ.3 հասցեին հարակից ճանապարհահատված	5 (37,5 գծմ) մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Գր.Լուսավորչի փող. հ.3 շենքի օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին ժ.09^{00}-23^{00}
24	«Իմպերիալ Պալաս Հոթել» ՍՊԸ	Կորյունի փող. հ.23 հասցեին հարակից ճանապարհահատվածի երթևեկելի մասի տեղային լայնացման հատված	13 (32,5 մ x 5,1 մ), միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Կորյունի փող. հ.23 հասցեի շենքի սեփականատիրոջ, աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
25	Քաղաքացի Հասմիկ Սարգսյան (անձնագիր՝ AH0437774, տրված 10.07.2007թ., 011 կողմից)	Սախարովի հրապարակ՝ Նալբանդյան փողոցի հ.48/1 հասցեին հարակից ճանապարհահատված	7 (17,5 մ x 5,0 մ), միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Նալբանդյան փողոցի հ.48/1 հասցեի շենքի սեփականատիրոջ և այլ օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ երկուշաբթի-ուրբաթ ժ.08^{00}-18^{00}

1	2	3	4	5	6
26	«Դիալաբ» ՍՊԸ	Մամիկոնյանց փողոց՝ հ.41 հասցեի շենքին հարակից ճանապարհահատված	3 (22,5 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Մամիկոնյանց փող. հ.41 հասցեի շենքի այլ սեփականատերերի և օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ երկուշաբթի – շաբաթ, ժ.08^{30}-19^{30}
27	«Տուն համար 1» ՓԲԸ	Մոսկովյան փողոցում՝ Մոսկովյան հ.35 հասցեում գտնվող շրջությանը հարակից ճանապարհահատված	6 (45,0 գծմ) մեքենաների հաջոր-դական տեղաբաշխ-մամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ «Տուն համար 1» ՓԲԸ-ի, աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա
		Սպենդիարյան փողոցում՝ Մոսկովյան հ.35 հասցեում գտնվող շրջությանը հարակից ճանապարհահատված	5 (37,5 գծմ) մեքենաների հաջոր-դական տեղաբաշխ-մամբ՝ մեկ շարքով		
28	«Վոթչ Վորլդ» ՍՊԸ	Հին Երևանցու փողոցի՝ Հյուսիսային պող. հ.5 շենքի հ.հ.171 և 175 տարածքներին հարակից ճանապարհահատվածի երթևեկելի մասի տեղային լայնացման հատված	3 (22,5 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Հյուսիսային պող. հ.5 հասցեի շենքի այլ սեփակա-նատերերի և օրինական տիրա-պետողների, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին, ժ.10^{00}-20^{30}
29	Քաղաքացի Իգոր Խաչատուրով (անձնագիր՝ BA0832787, տրված 23.05.2014թ., 001 կողմից)	Թումանյան փողոցի՝ Նալբանդյան փող. հ.98 շենքի հ.հ13, 16, 26 և 35 տարածքներին հարակից ճանապարհահատված	4 (30,0 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Նալբանդյան փող. հ.98 հասցեի շենքի այլ սեփակա-նատերերի և օրինական տիրա-պետողների, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին, ժ.10^{00}-00^{00}

1	2	3	4	5	6
30	«Արմենմոտոր» ՓԲԸ	Մ.Խորենացու փողոցի՝ հ.28 հասցեին հարակից ճանապարհահատված	10 (75,0 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին, ժ.09^{00}-00^{00}
31	«Գեղագիտության ազգային կենտրոն» ՊՓԲԸ	Աբովյան փողոցի՝ հ.13 հասցեին հարակից ճանապարհահատված	3 (22,5 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Աբովյան փող. հ.13 հասցեի շենքի այլ սեփակա-նատերերի և օրինական տիրա-պետողների, աշխատանքային ռեժիմը՝ երկուշաբթի-շաբաթ, ժ.09^{00}-18^{00}

Հավելված N 2
Երևան քաղաքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 23-ի
N ——- Ա որոշման

Ց Ա Ն Կ
ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ

Հ/Հ	Դիմող	Հայցվող ծառայողական կայանատեղի տարածքի հասցե	Կայանատեղում «ավտոտեղ»-երի քանակ (տարածքի չափեր) և կայանման ձև	Կազմակերպչի կողմից տուրքի վճարման պատրաստակամություն	Այլ տրանսպորտային միջոցների կայանման սահմանափակում, աշխատանքային ռեժիմ
1	2	3	4	5	6
1	«Բելլեզզա» ՍՊԸ	Թումանյան փողոցի՝ Աբովյան փող. հ.9 շենքի հ.1 տարածքին հարակից ճանապարհահատվածի երթևեկելի մասի տեղային լայնացման հատված	3 (22,5 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Աբովյան փող. հ.9 հասցեի շենքի այլ սեփակա-նատերերի և օրինական տիրա-պետողների, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին,, ժ.9^{00}-21^{00}
2	«Գլոբբինգ» ՍՊԸ	Մ.Մաշտոցի պողոտայի՝ հ.43 շենքի հ.հ.34 և 36 տարածքներին հարակից ճանապարհահատված	3 (22,5 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Մ.Մաշտոցի պողոտայի՝ հ.43 հասցեի շենքի այլ սեփականատերերի և օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին, շուրջօրյա
3	Քաղաքացի Ռոբերտ Եղիազարյան (անձնագիր՝ AM0841014, տրված 22.08.2012թ., 004 կողմից)	Աբովյան փողոցի՝ հ.33 հասցեի հ.1 բնակարանին և կցակառույցին հարակից ճանապարհահատված	3 (22,5 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացա-ռությամբ Աբովյան փողոցի հ.33 հասցեի շենքի այլ սեփակա-նատերերի և օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին ժ.09^{00}-22^{00}

1	2	3	4	5	6
4	«Դեմգո» ՍՊԸ	Տերյան փողոց՝ հ.91/1 հասցեին հարակից ճանապարհահատված	1 (13,45 գծմ), 2 (16,06 գծմ), 1 (10,94 գծմ), 1 (10,13 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Տերյան հ.91 հասցեի շենքի այլ սեփակա-նատերերի և օրինական տիրա-պետողների, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին ժ.09^{00}-00^{00}